3508-3509

906

491.99-8
T-23

2010

2002

245
4-21

ԿԱՆՈՆ

ՇԱՐԱԿԱՆՔ ՆԱԽԱՏՕՆԱԿԱՑ

ՍՐԲՈՑ ԾՆՆԴԵԱՆ ՃՐԱԳԱԼՈՒՑԻՆ

Օրհնեսցուք. ԴԿ.

Խորհուրդ մեծ և սքանչելի որ յամամ աւուր յայտնեցաւ,
Հովիւքն երգեն ընդ հրեշտակս, տան աւետիս աշխարհի։
Ծնաւ նոր տղայ ի Բեթղեհէմ քաղաքի.
Որդիք մարդկան օրհնեցէք, զի վասն մեր մարմնացաւ։
Անբաւելին երկնի և երկրի ի խանձարուրս պատեցաւ.
Ոչ մեկնելով ի Հօրէ ի սուրբ այրին բազմեցաւ։
Այսօր ցընծան երկինք ի վերուստ մեծ ծանոյցմառ աւետեաց.

Եւ արարածք ամենայն զգեցան
հանդերձ փրկութեան։
Այսօր յայրին ընծայեցաւ Քրիստոս
Որդին Աստուծոյ.
Եւ հրեշտակացն բազմութիւնքն,
յերկնից յերկիր վայր իջեալ։
Այսօր հովուացքն տեսեալ զարդա-
ւութեան արեգակն.
Եւ ընդ հրեշտակս երգէին փառք
ի բարձունս Աստուծոյ։
Ի Հօրէ ծագեցար լուսաւորել զարա-
բածս.
Արդարութեան արեգակն տէր
փառքք քեզ։
Ծընար ի յայրին ընծայեցաւ Բեթ-
ղեհեմ.
Արդարութեան արե՞։
Հովուաց յայտնեցար երկրպագեալդ
ի մոգուց.
Արդարութեան արե՞։
Եւ մեք երգեսցուք որ ի կուսէն մարմ-
նացար.
Արդարութեան արե՞։

102639 - KZ
1659-2004

Այսօր բանն ի հօրէ անմեկնելի և
անճառելի խորհրդով, ի ձեռն կուսա-
կան որովայնի տնօրինաբար յերկրի
երեւեալ։
Մանուկ անժամանակ ի հօրէ անսերմն
ի կուսէ, ի գիրկս մօր գրգռեցաւ այ-
սօր արարիչն երկնի և երկրի։
Որ մաքրեացն ըզՅորդանան և լուաց
ըզմեղս աշխարհի, զոր օրհնեն ան-
դադար արարածք ամենայն, զեակի-
ցն Հօր և Հոգւոյն։

Աստուածածին սուրբ կոյս անապա-
կան տաճար, անպարագիծ էին բոլորից
բնութեանց լայնածաւալ տեղի. այսօր
ընդ բերկրական գուարթնոյն կրեցեր
աւետեաց զտէրըն տերանց ի քեզ,
առ որ մաղթեմք բարեխօսել վասն
մեր անլռելի ձայնիւ։
Յիմանալի վտակաց տանն Աստուծոյ
հոսմանց. վիճակեալդ տեսանողացն
ձայնի արբմամբ ըզմայլեցար, այսօր

զանթառամբն ծաղկեցար ըզծալիկ ի ժամս տալով զպըտուղն. առ որ մաղթեմք բարեխօսել վասն մեր անլըռելի ձայնիւ։

Այսօր ի քեզ լըցեալ ամենասածնին բարբառ, որ ի փրկութիւն հասարակաց տուեալ նըշան բնութեան ազգի մարդկան, ահա կոյս յըղասցի և ծընցի որդի զ'ընդ մեզ յայտնեալն Աստուած. առ որ մաղթեմք բարե"։

Ոգ քեզ Աստուածածնին, ազբիւր աստուածային լուսոյն, որ լուսաւորէ զհաւատացեալս, միաբանական ձայնիւ երգով մեծացուցանեմք։

Ո՞ւ պարծանըք կուսութեան մարդկան, զո՞ւ ուրախութիւն հրեշտակաց, զո՞ւ բարձող անիծիցն, վասն որոյ ըզքեզ Աստուածածին մեծացուցանեմք։

Ո՞ւ ճշմարիտ արեւելք արեգականն արդարութեան, յորմէ ծագեաց փրկ-

կութիւն տիե՛զե՛րաց, միաբանական ձայնիւ երգով մեծացո՛ւցա՞նեմք։

Աստուածածին և սրբո՛ւհի՛, որ ըզբա՛նն Աստուած անսերմն յըղա՛ւթեամբ յարգանդի կրեցեր՝ անդադար երգով մեծացուցանեմք։

Զքեզ մայր կուսութեան և յըղութեա՛ն լուսոյ. և առագաստ անձառելոյ բնակո՛ղին, ի քեզ փեսայացեալ բանին. անդա"։

Փե՛ւ լո՛ւծան կնիք դատապարտութեանն, և՛ քե՛ւ կանգնեցաւ մեղուցեալ մայրըն գլորեալ. վասն որոյ ըզքեզ Աստուածածին և կոյս. անդա"։

Միայնոյ քեզ ի կանայս կոյս յետ ծննդեան երգեմք զօրհնո՛ւթիւն, զի լոյս ի լուսոյ քե՛ւ յայտնեցաւ աշխարհի. և զնախամօրն եբարձ զանէ՛ծ ա՛նձա՛ռ ծննդեամբն ի քէն։

Փեզ միայնո՛յ մարմնացելոյդ ի՛ սուրբ

կուսէն. օրհնութիւն ի բարձունս։
վեր երգե՛մք ասելով. փառք՝ քե՛զ
Քրիստոս. որ եկիր կամաւ Հօր կե-
ցուցանել զմեզ։

Խնդա Մարիամ, որ եղեր մայր Քրիստոսի, և աղաչե՛ա զառ ի քէն ըզմարմնացեալ բանն Աստուած, զի փրկեսցէ զմեզ ի փարձութենէ։

Հոգեգալուստ

Հոգիք հրեղինացն, այսօր տօնեն ընդ մեզ զգալուստ, Հոգւոյն Աստուծոյ։ Տեսանողն յառաջ. նշանակէր զառաքաբուղխ վերտակ իմա՛ստից ի մեզ հեղեալ ի Հոգւոյն։
Զէմրն հաւատոյ, զմայլեալ անմահական բաժակաւն այսօր բաշխէր ծարաւեաց։
Գետոցս այս գնացիւք, ցընծայ քաղաքն Աստուծոյ Սիօն մայր եկեղեցի։
Վասն որոյ և մեք երրեակ և մի

Աստուածութեան երգեմք զզփառս ի բարձունս։

Որ ի Հօրէ առաքեցա՛ր, մարդասէր կարող փրկիչ և զմեղուցեալ զմարդն բժժշկեցեր, ողորմեա տէ՛ր հրաժարելոյս, զոր հրաւիրեալ առ քեզ կոչեցեր։
Որ ի խաչին բեւեռեցար, մարդասէր կարող փրկիչ, և ըզցող անապական արեանդ ցողեցեր տիեզերաց. ողորմեա տէր հրա՞։
Որ զդժոխս աւերեցեր, և զգերեալսն փրկեցեր և զարդելեալսն վերածեր ի յոյս կենացն յաւիտենից, ողորմեա տէր հրա՞։

Փառք Հօր։ Այժմ և Միշտ։

Եւ մեք երգեսցուք որ ի կուսէն մարմնացար, արդարութեան արեգակն տէր փառքք քեզ։

Քարոզ. ԴԿ. ԲԿ.

Եւ եւս խաղաղութեան ըղձեր աղաչեսցուք։
Տէր ողորմեա՛

Վասն ի վերուստ խաղաղութեան և փրկութեան՝ անձանց մերոց ըղձեր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։

Վասն լսելի լինելոյ տեառն Աստուծոյ՝ ձայնի աղաչանաց մերոց ըղձեր աղա՞։

Վասն քաւիչ և ներող լինելոյ Աստուծոյ՝ ի վերայ մեղայ մերոց ըղձեր աղա՞

Վասն թողլոյ մեզ զամենայն յանցանսս մեր՝ ըղկամայ և զակամայ ըղձեր աղա՞

Վասն զի մի ընդ խոտանսն դատիցեմք յաւուրն պատասխանատուութեան ըղձեր աղա՞

Վասն հոգւոցն հանգուցելոց, որք ճշմարիտ և ուղիղ հաւատով ի Քրիստոս ննջեցին ըղձեր աղաչեսցուք։ Ցիշեա տէր և ողորմեա։

Եւ եւս միաբան վասն ճշմարիտ և սուրբ հաւատոյս մերոյ ըղձեր աղա՞

Զանձինս մեր և զմիմեանս տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք։ Քեզ տեառնըդ յանձն եղիցուք։

Ողորմեաց մեզ տէր Աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ։ Տէր ողորմեա։(Եղէց՝ եղիցէ)։

Քարոզ. ԱԶ. ԳԶ.

Վասն ի գիշերի և ի տուընջեան, և յամենայն ժամու խօսիլ մեզ ըղբան տեառն ըղձեր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։

Վասն չանկանելոյ մեզ ի փորձութիւն, որում ոչ կարեմք հանդուրժել ըղձեր աղա՞։

Վասն անբիծ և անդատապարտ կալ մեզ՝ առաջի ահեղ ատենին Քրիստոսի ըղձեր աղա՞։

Վասն առաջնորդելոյ մեզ՝ ի նաւահանգիստն կենաց անվախճանից ըղձեր աղա՞։

Վասն արժանի լինելոյ մեզ՝ վերին կոչմանն և երկնից արքայութեանն ըղձեր աղա՞։

Վասն հոգւոցն հանգուցե՞, Ցիշեա տէր և ողոր՞։

Եւ եւս միաբան, Զանձինս մեր։ Ողորմեաց մեզ տէր Աստուած։ Տէր ողորմեա։

Քարոզ. ԱԿ. ԳԿ.

Վասն ուղղելոյ զգնացս մեր՝ ի ճանապարհս խաղաղութեան ըղձեր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։

Վասն ցրելոյ ի մէնջ զամենայն խորհուրդս չարին ըղձեր աղա՞։

Վասն պարգեւելոյ մեզ՝ առողջ խորհուրդս և առաքինի վարս ըղձեր աղա՞

Վասն պահելոյ ըղմեզ՝ ընդ հովանեաւ ամենազօր աջոյն իւրոյ ըղձեր աղա՞

Վասն խորտակելոյ զհակառակորդն, վաղվաղակի ընդ ոտիւք մերովք ըղձեր աղա՞

Վասն հոգւոցն հանգուցելոց՝ որք ճշմարիտ և ուղիղ հաւատով ի Քրիստոս ննջեցին զտէր աղաչեսցուք։ Ցիշեա տէր և ողորմեա
Եւ եւս միաբան վասն ճշմարիտ և։ Զանձինս մեր։ Ողորմեայ մեզ տէր Աստուած։

Քարոզ. ԲՁ. ԴՁ.

Վասն գտանելոյ մեզ՝ զշնորհս եւ զողորմութիւն ի բարերար տեառնէ մերմէ զտէր աղա"։ Տէր ողո"։
Վասն փրկելոյ ըզմեզ՝ ի զրպարտութենէ մարդկան և յորոգայթից սատանայի զտէր աղա"
Վասն ամենայն անձանց քրիստոնէից՝ և տանց հաւատացելոց զտէր աղա"։
Վասն որք ի լերինս յայս և ի փապարս՝ բնակեալ են ոուրբ հարքն մեր զտէր աղա"։
Վասն որք սաղմոսիւք և օրհնութեամբ կատարեն զամենայն ժամանակս կենաց իւրեանց զտէր աղա"։
Վասն հոգւոցն հանգուցելոց որք ճշմարիտ և ուղիղ հաւատով ի Քրիսաոս ննջեցին զտէր աղա՛։
Եւ եւս միաբան։ Զանձինս մեր։ Ողորմեայ մեզ։

Ալէլուի

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա.

Եցոյց տէր ըզփրկութիւն իւր, առաջի ազգաց յայտնեաց զարդարութիւն իւր։

Ցիշեաց ողորմութեամբ իւրով զՅակոբ, ճշմարտութեամբ իւրով զտունն իսրայելի, և տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա.

Ցիշեա տէր զԴաւիթ. և զամենայն հեզութիւն նորա։
Որպէս երդուաւ տեառն, և ուխտս եդ Աստուծոյ Յակոբայ։
Փառք և երկրպագութիւն։ Այժմ և միշտ։ Ալէլ"։
Դասք հրեշտակաց օրհնեն զքեզ Քրիստոս, ալէլուիա։ Մարդկան ազգ սաղմոսեն քեզ, ալէ"։ ալէ"։

Հարց ԴՁ.

Անըսկիզբն էակից բանըդ հօր, որ էիր յառաջ քան զյաւիտեանս, և եկիր ի փրկութիւն ստեղծուածոց քոց. ըզքեզ օրհնեմք Աստուած հարցն մերոց։ Ծընար ի կուսէ՛ անճառ միութիւն, անբաժանելի և միշտ գոլով ոչ մեկնեցար ի հայրական ծոցոյ, ըզքեզ օրհ։ Ցընծութեամբ տօնեսցուք ըզծնունդ քո սուրբ, որ յայտնեցար մեզ լոյս

ի լուսոյ, և լուսով քո լցեր զգտիեզե-
ցիս. զգքեզ օրհ։
Գործքք տեառն զգտէր օրհնեցէք, և
բարձր արարէք զգնա յաւիտեան։
Երկինք տեառն զգտէր օրհ։
Զգծնեալն ի սրբոյ կուսէն օրհնեցէք,
և բարձր։

Փառք. հօր։ Այժմ և միշտ

Զանճառելի զգծնունդ Փրկչին գովե-
ցէք, և առաւել բարձր արարէք զգնա
յաւիտեան։

Մեծացուցէ. Գզ.

Ուրախ լեր Աստուածածին յոյս և
փրկութեան մայր՝ զգքեզ ընդունող
լուսոյ մեծացուցանեմք։
Զգքեզ լուսոյ մայր և կոյս՝ զգքեզ
գանձդ կենաց Աստուածային, ձայնիւ
ցնծութեամբ. մեծա։

Փառք հօր։ Այժմ և միշտ։

Մայր սուրբ անարատ լուսոյն, հրեշ-

տակային օրհնութեամբ պատուեալ
զգքեզ մեծացուցա։

Ողորմեա. Գզ

Ամենիմաստ ամենից հայր բազմազեղ
խնամող ստեղծող և տէր բոլորից, ա-
նեղ և էիցս էակ, զոր միշտ օրհնեն
դասք անմարմնականաց յաւէրժաբար
հընչմամբ։
Որ կերպարան և կնիք հօր առեալ վա-
սն մեր ծառայի կերպ ի կուսէն, որ
էն ի յսմթոռ փառաց անտես վերնոցն,
ի յայրին իջեւանի և ի մնուր անբանից
բազմեալ։

Փառք հօր. Այժմ և միշտ։

Զգ ի կուսէն մարմնացեալ բանն եկայք
ժողովուրդք ընդ հովիւսն բարեբա-
նեսցուք, և ընդ մոգուցն երկրպագեսցուք, ընդ երկնային զօրսն երգե՛սցուք
փառք ի բարձունս Աստուծոյ։

Օրհնեցէք. ԳԶ.

Ճառագայթ և կերպարան էութեան հօր բանդ Աստուած, ըզքեզ բարեբանեմք ասելով փառք ի բարձունս Աստուծոյ։

Որ միացար ի մարմնի անճառապէս ճշմարիտդ Աստուած. ըզքեզ բարե։

Փառք Հօր. Այժմ և միշտ։

Որ զանիծիցըն բարձեր ըզդատապարտութիւն Քրիստոս Աստուած. ըզքեզ բարե։

Որքի. . . . . Եւ օրհնութիւն քեզ ի բարձ"։

Արեգակն արդարութեան այսօր յայտնէցար ազգի մարդկան։

Մարդ եղեալ սրբեցեր ըզՁուրըս վերաձգնեալ ըզմեզ մրկրտութեամբն սրբոյ Հոգւոյն։

Ի վայելչութիւն փառաց սրբութեան քոյ, ի յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ ըզքեզ, մարդ եղեալ սրբ։

Թափորի ժամանակ Խորհուրդ մեծ և զայս ասա

Այսօր զանՃառելի ծննդեան քո տէր զԸսպասաւոր խորհրդոյ, ի հողանիւթ գոյացութեանց փոխադրեցեր ի յերկինս։

Այսօր զանտանելի բանիդ բարձողն ըզքերովբէն հողեղէն, բարձրացուցեր 'ի ստորնայնոցս գերակայիցըն կայանս,

Այսօր զանապական կոյսն որ ըզքեզ մաքուր կաթամբ կերակրեաց. ի զգայական փոխեալ բնութեանց յիմանալեացն խորանս։

Այսօր տօն է ծննդեան աւետիս։ Տեառն մերոյ և յայտնութեան աւե"։ Այսօր արեւնարդարութեան աւետիս, Երեւեցաւ ի մէջ մարդկան աւետիս։ Այսօր սուրբ կոյսն անապական աւե"։

Ծնաւ եբեր զանմահ արքայն աւետիս։
Այսօր հրեշտակք յերկնից ի՛ջան աւե՛ ։
Ընդ մեզ օրհնեն զանմահ արքայն աւե՛ ։

ՃԱՇՈՒ ԾՆՆԴԵԱՆ ՏԵԱՌՆ

Մեծացուցէ. ԳՁ.

Սուրբ զԱստուածածինն, օրհնու-
թեամբ մեծացուցանեմք։
Աւետաւոր հրեշտակին աւետարաներ,
ըզծնեալ Փրկիչն ի սրբոյ կուսէն։

Փառք Հօր. Այժմ և միշտ։

Ասէ ուրախ լեր բերկրեալդ. քանզի
Տէր տերանց է ընդ քեզ։

Ալէլուիա. ալէլուիա.

Այսօր ծնաւ որ ի Հօրէ յառաջ քան
զյաւիտեանս որդին, որ է օծեալ Տէր
ի քաղաքի Դաւթի, ի վայելչութիւն
սրբոց քոց՝ յարգանդէ յառաջ քան
զարուսեակ ծընայ ըզքեզ։

ԿԱՆՈՆ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ԴՁ.

Լոյս ի լուսոյ ի Հօրէ առաքեցար և
մարմնացար ի սուրբ կուսէն, զի վե-
րըստին նորոգեսցես զապականեալն
Ադամ։
Դու Աստուած ի յերկրի երեւեցար,
և ընդ մարդկան շրջեցար. և փրկեցեր
ըզորիեզերըս յանիծից Ադամայ։
Քեզ ի յերկնից վկայեալ Հօր քո ձայն,
ասէ՝ դա է իմ որդի, և սուրբ Հո-
գին ըզքեզ յայտնեաց աղաւնակերպ
երեւամբ։

Ալէլուիա. ալէլուիա։

Ուրախ եղիցին երկինք՝ և ցնծասցէ
երկիր, գոչարձասցի ծով լրիւ իւրով,
ցնծասցեն դաշտք և ամենայն որ է
ի նոսա։

Կենդանարար Աստուած մարդասէր
հոգի, ըզժողովեալսըն միաբանական սի-
րով լուսաւորեցեր հրեղինէաբ լեզուօք,

1659-2007

վան որոյ և մեք այսօր տօնեմք ըզդա-
ղուստ քո սուրբ։

Քարոզ

Յամենայն ժամ օրհնեմք զօրհնեալ
փրկիչդ Էմմանուէլ. ծընար ի կուսէն
և վերստին ծննդեամբ մկրտեցար այ-
սօր ի Յորդանան ի Յովհաննէ. նորին
բարեխօսութեամբ ընկալ զաղաչանս
քոց պաշտօնէից. աղաչեմք։

Լուր տէր և ողորմեա։

Որ սրբեցեր ըզՀուրան Յորդանանու
սրբիչդ աշխարհի. տալով ըզկնիք նո-
րոգման որդւոց սիօնի տուր մաքրու-
թիւն սուրբ եկեղեցւոյ, և ազատու-
թիւն քում ժողովրդեան. աղաչեմք։

Լուր տէր և ողորմեա։

Հեղցես Տէր ի մեզ ըզշնորհս հոգւոյդ
զոր ընկալար տնօրէնութեամբ ի Յոր-
դանան, զհոգի իմաստութեան զիտու-
թեան և զօրութեան, զհոգի հանճա-

ցոյ և խորհրդոյ Աստուածպաշտու-
թեան լցո ըզմեզ հոգւով երկիւղի
քոյ. աղաչեմք։

Լուր տէր և ողորմեա։

Ի հաղթից թշնամւոյն պարսպեալ մ-
բացո սուրբ զեկեղեցի, և յանուն քո
ժողովելոցս շնորհեա զքաւութիւն և
զթողութիւն, միածին որդի Աստուծոյ,
յիշեա զհոգիս նենգեցելոց մերոց և այդ
արա ի քում գաբատեանդ. աղաչեմք։

Յիշեա տէր և ողորմեա։

Գոչմամբ Տիրու հւոյ խակապէս մօր քոյ
և կուսի Մարիամու Աստուածածնին, և
հուպ եղելոյ քեզ հողանիւթ հրեշտա-
կին ի Յորդանան այսօր ըզքեզ ձեռ-
նադրողին, կրկին բացողին զերկինս
սրբոյն Ստեփաննոսի նախավկային, և
հօրն մերոյ սրբոյն Գրիգորի լուսաւոր-
չին և ամենայն սրբոց քոց տէր որք յայ-
սխաւենից քեզ հաճոյացան. աղաչեմք։
Տէր ողորմեա տէր ողորմեա լուր տէր
և ողորմեա։

Տաղ

Ո՛վ զարմանալի, խորհուրդս այս մեծ յայտնեալ, արարիչն Աստուած ի Յորդանան եկեալ։

Կամէր մկրտիլ, ի ծառայէն իւրմէ, Հառնոյր Կարապետն, ըզմկրտելն ի յանձն։

Յորդանան լուեալ փախստական դառնայր, վտակ առ վտակ, պատգամաւոր լինէր։

Գետ մի՛ զարհուրիր, քո արարիչն եմ ես, եկեալ մկրտիմ և լուանամ ըզմեզս։ Յիսուս յառաջեաց, աստուածութեամբն ի ջուրն հանդերձ Յովհաննու Յիսուս ի գետն եմուտ։

Ամէն ալէլուիա ալէլուիա ալէլուիա։

Առաքելոյ աղաւնոյ ի ջանելով մեծաձայն հնչմամբ ի բարձանց, ի նմանութիւն լուսոյ փայլման հրաշինեաց ան-

կիզելի զաշակերտսն, մինչդեռ նստէին ի սուրբ վերնատանն։

Անհաւատական աղաւնի, անքննելի որ քննէ զխորս Աստուծոյ, զոր առեալ ի հօրէ պատմէ զահաւոր և զմիւսանգամ գալուստն, զոր քարոզեցին համագոյական։

Օրհնութիւն ի բարձունս, ելոցին ի հօրս Հոգւոյն սրբոյ, որով առաքեալքն արբեցան անմահական բաժակաւն, և հրաւիրեցին զերկինս ի յերկինս։

ՃԱՇՈՒ ԾՆՆԴԵԱՆ ՃՐԱԳԱԼՈՒՅՑ

Մեծացուցէ ԳՁ.

Զանճառելի լուսոյ մայր, և ըզբնակալան անսկզբնակից Որդւոյն. օրհնութեամբ մեծացուցանեմք։

Զանհաս տնօրէնութեան մայր, և զանճնաւոր տաճար աստուծոյ բանին օրհ՞։

Փառք Հօր։ Այժմ և միշտ։

Զբողբոջից փրկութեան մայր, որ զանտանելի էից ի յարգանդի եբարձ,

ըզնա ամենեքեան օրհնութեամբ մեծացուցանեմք։

ԶՐՕՐՀՆԵԱՑ

Այսօր ձայն հայրական յերկնից իջեալ հաճոյական սիրեցելոյ որդւոյ վըկայ, այն յորդորէ գեա յորդորէ, գեա Յորդանան աւետաւոր ձայնիւ. երգեր մեծ Կարապետն Յովհաննես։

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻՆ

Քրիստոս փառաց թագաւոր այսօր եկեալ յընծայումն կատարելով նա զօրէնս քառասնօրեայ պալաստեամբն։ Ի գիրկս առեալ ծերունւոյն զաստուաց ծորդին և ասէր, մեծ աւետիս են յայսօր տիեզերաց ամենից, մեծ աւետիս են այսօր նահապետաց ամենից, մեծ

աւետիս են այսօր մարգարէից ամենից, մեծ աւետիս են այսօր քահանայից ամենից, մեծ աւետիս են այսօր ժողովրդոց ամենից այլ մեծագոյն աւետիս Քրիստոնէից համայնից։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՅԿ—ՍՍՌ ԳԱ

2nd 4d

2013

3508-3509

<< Ազգային գրադարան
NL0295211

<< Ազգային գրադարան
NL0295210